

# ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

---

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 6

1 Յոշիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԵԿԵԱՆ

1891

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. *ՆՈՐ ՇՐՋԱԲԵՐՍԿԱՆ ԼԵՒՈՆԻ ԺԳԻ Գործաւորաց վիճակին վրայ: (Շար.)— Թարգմ. Գեորգ վ. Թերզիպուլեան:*
2. *ՎԵՐՋԻՆ ԱՄԻՍԲ Սակաւամեայ կենաց ողբացեայ ՊԵՏՐՈՍԻ ԱԴԱՄԵԱՆ:*
3. *ՄԱՐՄՆԱՄԱՐՁ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարեւի) .— Յովն. վ. Անդեան:*

# Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ Ե

1 Յուլիս, 1891

ՆՈՐ ԵՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԼԵԻՈՆԻ ԺԳ. Ի

Գործաշորաց վիճակին վրայ



(Շարայարութիւն) (\*)

Մեծաւ վտանգութեամբ ձեռնամուխ կ'ըլլանք յայս նիւթ եւ արդարեւ Մեր իրաւամբ, որովհետեւ այնպիսի ինդիլը մըն է այս, որուն պիտի չզոհուի ամենեւին ազգու լուծումն՝ առանց ի թիկունս կոչելու գերօնս եւ զԵկեղեցին : Եւ քանզի Կրօնից պահպանութիւն եւ Եկեղեցւոյ իշխանութիւնէն կախումն ունեցող իրաց մատակարարութիւնը զխաւորապէս Մեզ յանձն եւ դած է, լռելով պարտազանց պիտի համարուէինք : Արդարեւ այսչափ ծանրակշիւ նիւթ մը այլոց եւս գործակցութիւնն ու փոյթը կը պահանջէ. այսինքն է կառավարութեանց պոլիտեքոն, տերանց ու փարթամաց, հուսկ յետոյ սինդրորին, որու համար են այս ճգուճք. այսու հանդերձ եւ դաջն անկասկած կը հաստատունը թէ Եկեղեցին որ յետադատուի, մարդկան աշխա-

(\*) Տե՛ս Պարկէր Բ. Տարէ, ԹԻՒ 5, էջ 107 :

տութիւնք ի դերեւ պիտի երևն : Զի Եկեղեցին է որ կը քաղէ ու կ'առաջարկէ յԱւետարանէն այն վարդապետութիւններն որոց զօրութեամբ կամ բողոքովն վէճն կրնայ հանդարտիլ, եւ կամ անտարակոյս կը մեղմանայ՝ զաժանութիւնն ի լաց թողլով, նոյն ինքն է որ կը ձգնի ոչ միայն միաբը հրահանդել, այլ նաեւ իւրաքանչիւր ուրուք կեանքն ու բարքն իւր պատուիրաններովը կանոնաւորել, նա է որ սինդրորին վիճակն իսկ կը բարւոքէ բազմաթիւ օգտակար հաստատութեամբք, եւ կը բաղձայ ու կը խնդրէ որ ամեն զասակարգերու խորհուրդքն եւ ճշդունք ի մի միաբանին գործաւորաց խնդրոյն եւ կարօտութեանց հեշտեաւ զարման տանելու համար . եւ կը համարի թէ սէտք է առ այս ի գործ ածել՝ չափով այո՛ր եւ իմաստութեամբ տէրութեանց օրէնքներն եւ իշխանութիւնք :

Եւ ամեն լսնէ առաջ իբրեւ հաստատ հիմն դնելու է զայս թէ իւրաքանչիւր ոք սէտք է տանիլ իւր վիճակը : Քաղաքային ընկերութեան մէջ անհնար է որ ստորինք վերնոց հաւասարին : Զայս կը պնդեն յիւրաւի Ընկերվարականք . այլ ընդ դէմ ընտթեան ընդունայն է ամենայն ձիզն : Զի ի մարդիկ կան բազում եւ մեծամեծ անհմանութիւնք ընտթեամբ . ոչ միւսնայն է ամենեցուն միտքն , ոչ հանձարն, ոչ առողջութիւն, ոչ ոյժ եւ կորով, որոց հարկաւոր զանազանութիւնէն կը ծնանի ինքնաբերաբար վիճակաց տարբերութիւնն : Եւ այս անհաւասարութիւն կարի քաջայարժար է թէ առանձնականաց եւ թէ հասարակութեան օգտին . զի հանրային կեանքն կը կարօտի գործառնութեանց յարմար պէս պէս կարողութեանց եւ զանազան պաշտամանց , զորս կատարելու համար մարդիկ առաւելապէս կը մղուին միոց միոց աւտնին իրաց սարբերութեան համաձայն : Արդ մարմնաւոր աշխատանքի նկատմամբ, եւ ոչ իսկ է վէճակէ «նեղութեան» բողոքովն անգրազ պիտի ըլլար մարդ, այս տարբերութեամբ որ, զոր ինչ յայնժամ կամքն պիտի բաղձար ազատօրէն ի հեշտութիւն ողւոյ, զայն ապա ցաւօք իսկ ի քառութիւն յանցանաց կրեղն հարկ ստիպողական եղաւ : «Անիծեալ լիցի երկիր ի գործս քո, տրտմութեամբ կեբիցես զնա զամենայն ատարս կեցնաց քոց» (\*) Նոյնպէս երկրի վրայ ուրիշ զրժուարութեանց ու դաճութեանց ամենեւին վախճան մը պիտի չըլլայ . որովհետեւ մեղքին չար հետեւութիւններն խիստ են,

(\*) ԾՂՆ. Գ. 17

զմնագակք, զփռտարինք . եւ հարկ է որ ատոնք ընկերանան մար-  
զուն ցլխածան կենաց : Ուստի ցաւ եւ տառապանքը մարդու  
համար է . եւ թէպէտ մարդիկ ամեն հնարք հնարեն այլ սովայն  
ոչ մի զօրութեամբ, ոչ մի արուեստիւ պիտի չկարենան այս-  
պիսի վիշտերն լիովին արմատաքի խլել մարդկային ընկերու-  
թենէն : Եթէ գուցեն ոմանք որ պարծենան զայն ի պուխ հա-  
նել, որ թշուառացեալ ուամկին խոստանան կեանք մը զերծ յո  
եւ է ցաւոց եւ տառապանաց եւ լի հանդատեամբ եւ մշտաուե-  
հածոյլւք, սոքա արդարեւ կը խաբեն ժողովուրդը, եւ այնպիսի  
նենպ մը կը գործեն եւ սրողայթ կը լարեն, որ մեծագոյն ազե-  
ախց պիտի յանպի քան գնեցիկայտ Խոհեմութիւնն այն է որ  
մարդկային բաները այնպէս նկատել, որպէս ենն, եւ ինչպէս բ-  
սինք միանգամայն ցաւոց եւ տառապանաց յարմար պիտիանքն  
այլուստ խնդրել :

Այս նիւթոյս մէջ զլիաւոր սխալմունքն այն է որ երկու  
զատակարգներն իրարու իջր բնականաբար ոտտի կ'ենթադրուին,  
իրիւ թէ բնութիւնն զինամ ըլլաց ընչաւէտներն ու սինքորը,  
միմեանց ընդ զէմ յամառոտ մարտիւ մաքսուելու, Եւ այս այն-  
չափ հակառակ է բանին եւ ճշմարտութեան, զի ասոր հակա-  
ռակն է բուն ճշմարտոր . զի ինչպէս զանազան անդամներ կը  
միանան ի մարմնի ուստի կը ծագի այն համեմատական բարե-  
խաւտութիւնն, զոր իրաւամբ կրնաս համաչափութիւն անուա-  
նել, նոյնպէս եւ ընկերութեան մէջ բնութիւնն օրինապարձ է  
որ երկուքին այս զատակարգը զուգին միարան ի միասին, եւ զիւ-  
րար հաւասարակչութեան մէջ բանն : Մին բոլորովին կը կա-  
րօտի միւտոյն, չկայ վարձք առանց աշխատանաց, եւ ոչ ա-  
ւանց վարձուց կրնայ աշխատանք ըլլալ : Միահողի համաձայ-  
նութիւնն կը ծնանի իրաց գեղեցկութիւնն ու կարող, ընդհա-  
կառակն մշանջենաւոր կռիւէն հարկաւորապէս կը ծագի խառ-  
նիխուան շփոթութիւն ընդ ամենի վայրագութեան : Եւ այժմ  
կռիւն ի միջոյ բառնալու եւ նորին արմատներն իսկ խլելու  
համար Քրիստոնէական կարգաց եւ հաստատութեանց զարմա-  
նալի է զօրութիւնն եւ բազմարեղուն :

Եւ նախ քան զամենայն, կրօնից բոլորնորակ վարդապետու-  
թիւնն ու բարեկարգութիւնն, որոց թարգման է Եկեղեցին ու  
պահապան, մեծագլխ կարող է վարթամներն ու սինքըրն ի-  
րարու հետ սերտիւ զօրելու, երկուքին զատակարգերն ալ իւր  
պարտականութեանց վերակոչելով, մանաւանդ այն տեսակներուն

որք արդարութենէն կը ծագին : Այս պարտուց մէջ ահաւա-  
սիկ սինդրորին ու գործաւորին պատկանողներն . զայն աշխա-  
տութեանն, որուն համար ազատ կամօք ու արդարապէս գաշնա-  
ղիւր եղաւ , պարտի ամբողջովին եւ հաւատարմաբար հատու-  
ցանել . իր տիրոջ բաներուն եւ անձանց ամենեւին չվնասել .  
նոյն իսկ իր պահանջքն պաշտպանելու մէջ ի բաց կալ ի բռն-  
նութենէ եւ ընդդէմը եւ ոչ իսկ երեւոյթը զգենելու , եւ չմի-  
արանիլ երբէք անդամ մարդոց հետ . որք խորամանկութեամբ  
ցոյց կուտան չափազանց յոյսեր եւ կը ճամարտակին ու կը  
չուային մեծամեծ խոտուումներ, որոց ապաշաւն անագան է եւ  
անօգուտ , եւ պատճառք բախտաւեր կործանման : Իսկ ընչա-  
ւէտաց եւ տերանց այսօքիկ են պարտիք . ոչ իրբեւ զերի շը-  
կատել գործաւորները . մեծարել ի նոսա , մարդոց արժանապա-  
տուութիւնը որ անուացեալ է Քրիստոնէական գրոշմով : Կար-  
նաւոր աշխատութիւնք, եթէ ունին մատուցանելք բնութեան  
եւ քրիստոնէական իմաստասիրութեան , յամօթ չեն մարդու ,  
այլ ի փառս . զի կենաց պիտոյքն հայթայթելու համետ կա-  
րողութիւն կը մատակարարեն : Իսկ որ ամօթային է եւ ան-  
գութ, այն՝ մարդիկներն իրբեւ լոկ շահաբեր բաներ չարաչար  
գործածելն է եւ ոչ առ մեծագոյն ինչ գրել զանոնք եթէ ոչ ըստ  
ձրայինոյ կորովոյն եւ քաջարագուկ ուժոյ : Նմանապէս պատ-  
ուիրան է նկատի առնուլ գործաւորաց վրայ կրօնք եւ հուրոյ  
բարիքը : Անոր համար տերանց կը պատկանի գործաւորին վրայ  
հսկել, որպէս զի հարկաւոր եղող ժամանակը բարեպաշտ գոր-  
ծոյ զբաղնու . թոյլ չտալ որ ապականութեանց հրապուրանացը  
ու մեղքի պատրանացը մէջ խարդաւանի . եւ ոչ իւրիք իրօք զին-  
քն օտարային յառանին իննամոց եւ ի վուժոյ իննայողութեանն,  
նոյնպէս չհրամայել անոնց չափազանց աշխատութիւն որուն չի  
բաւեն զօրութիւնքն, կամ այնպիսի որ չհամաձայնի հասակին  
եւ սեռին հետ : Այլ տերանց ամենամեծ պարտեաց մէջ մեծա-  
գոյն է . արդարաբաշխ ըլլալ առ ամենեւին : Յիրաւի ըստ ար-  
դարութեան վարձքի չափ մը հաստատելու համար, շատ պարտ-  
ուայք ի միասին մտածելու է . բայց ընդհանրապէս թոյլ փչեն  
ընչաւէտք եւ զրամատեարք որ անձնիւր շահապիտութեամբ  
կարօտեաններն ու թշուառներն ընկճելն եւ յայլոյ չքաւորութե-  
նէ օգուտ քաղելը թոյլ չէ արուած ոչ յԱստուածային եւ ոչ ի  
մարդկային իրաւանց : Իսկ զրիկ զո որ եւ իցէ ի պարտու-  
պատշաճ վարձուցն , եղևոն է վայրենաբարոյ, որ ի ձայն բար-

ձրագոյն ի դայրոյթ կը կոչէ ի վայր երկնից վրէժինոյիր սըրտ-  
մտութիւններն: «Ահա, ասիկ վարձք մշակաց . . . գրկեալն ի  
մենջ՝ աղաղակէ, եւ բողոք հնձողացն էհաս յակաւնչս Տեսուն  
գօրութեանց» (\*) Հուսկ ուրեմն պէտք է ընչաւէտք զգուշմանն  
զի մի գուցէ սինդրորին խնայութեանց ո եւ է պայմանաւ յիսս  
հատյնն, ոչ բռնութեամբ, ոչ դաւով, եւ ոչ վաշխական հնար-  
իւք. եւ այս այնու եւս առաւել, զի նոքա ոչ ըստ բաւականի  
պատասխարեալ են ընդդէմ անիրաւութեանց եւ անզուսպ յար-  
ձակմանց, եւ անոնց ստայուած որչափ գուղնաքեայ, նոյնչափ  
սըրազնազոյն պէտք է համարուի:

Միայն այս օրինաց հպատակութիւնն կարող պիտի չըլլար  
միթէ հակառակութեանց բռնութիւնն եւ պատճառները չիջու-  
ցանել: Այլ Եկեղեցին սակայն վարդապետ ունելով եւ առաջ-  
նորդ զՅիսուս Քրիստոս, ի մեծագոյնս եւս կը նկրտի. կէս նը-  
պատակի դրած է կատարելագոյն պատուիրանաց միջոցաւ մօ-  
տաւոր զօգրեալ եւ սերտ բարեկամութեամբ երկրքին դասա-  
կարգերն մին ընդ միւսոյն միաւորել: Չեմք կրնար որպէս պատ-  
շածն է եւ արժան այդ մահացու կեանքն իմանալ ու գնահա-  
սել, եթէ չյառէ հողին իւր աչկունքն զպլիք եւ այն անմահ  
կենաց, որ թէ միանգամ յապախտ առնուի, այլ այնու հետեւ  
փոյթ ընդ փոյթ կը քայքայի կը կորի համեստին կերպարանք եւ  
ճշմարիտ ծանօթութիւն. նա զի եւ այս համազոյնի ամբողջու-  
թիւն ստուերամած գաղանիք մը կը դաւնար, անթափանցա-  
կան որոյ եւ իցէ մարդկեղէն հետազօտութեան: Ուստի, զոր  
ինչ ուսաք ընութեան ի զեկոյց, նոյն եւ Քրիստոնէական հը-  
րամանակարգ վարդապետութիւն է, յոր կը յենու կրօնից բո-  
վանդակ պայմանն եւ հաստատութիւն, իբրեւ ի հինն զլիաւոր,  
այսինքն թէ յայնժամ ճշմարտապէս պիտի կեամք, յորժամ  
յատտի կենացս պիտի չուեմք: Չի եւ Աստուած չի ծնաւ ըզ-  
մարդ այս բեկանուտ եւ վաղանձուկ իրաց համար, այլ երկնա-  
ւորաց եւ յաւիտենականաց, եւ տուաւ մեզի երկիրն իբրեւ վայր  
աքաբանաց եւ ոչ տեղի ընակութեան: Հարստութիւններ եւ  
ուրիշ բաներ որոնք բարիք կ'անուանին, զեղուն քեզ կամ  
պակին, յաւիտենական երանութեան նկատմամբ չէ ինչ փոյթ,  
այլ թէ զանոնք ինչպէս կը գործածես, այս է ահաւաստիկ ամե-  
նամեծ իսկ փոյթ: Պէտպէս գառնութիւններն որոնցմով մահա-

(\*) Յակոբոս Ե, 4:

ցու այս կեանքն կը հիւսուի, Յիսուս Քրիստոս իւր առաքաղէի  
փրկագործութեամբը բնաւ չամենաացուց, այլ զանոնք ի գրդիւ ա-  
ռաքինութեան եւ ի նիւթ արդիւնաւոր արժանեաց կարգեց .  
այնպէս ինն ամենեւին՝ զի եւ ոչ մի ոք ի մահկանացուաց կա-  
րող պիտի ըլլայ յաւիտեանական վարձուց արժանանալ, եթէ չը  
սնդի զհետ արիւնաթաթաւ հետոյն Յիսուսի Քրիստոսի «Եթէ  
համբերեմք, ընդ նմին եւ քաղաւորեցուք» (1). Նա կամակար  
յանձնաւու լինելով վատակոյ եւ չարչարանաց, չարչարանաց  
եւ վատակոյ խտուածիւնը սքանչելապէս մեղմացոյց . եւ ոչ  
միայն օրինակաւն, այլ իւր շնորհօք եւ յաւերժական վարձուց  
յուսոյն խոտամամբ, ցաւոյ համբերութիւնը զիւրինցուց. «Զի առ-  
ժամայն յաճախարիւն քեքեւ նեղութեանս մերում ի յաւիտե-  
նականն առաւելութիւն, գնեծութիւն վառացն գործէ ի մեզ»(2):  
Ուստի լիարարդիկ մեծատանց կ'աղղարարուի թէ՛ ինչքն  
եւ դոյք ի ցաւոյ վեր՝ չնն կացուցաներ, եւ ոչ կ'օգնեն ինչ ի  
մշտնջենաւոր երջանկութիւն, այլ մանաւանդ խտփան իսկ են(3).  
Թէ ի սարսափ ընչաւեաց պէտք է որ ըլլան Յիսուսի Քրիս-  
տոսի սնտոփոր սպանալիքն (4), թէ ընչից գործածութեանը վր-  
այօք երբեմն Աստուծոյ զատաւորի անաչառապէս համար պի-  
տի տրուի Իսկ նայն ինչն հարստութիւնը գործածելու նկատ-  
մամբ եղող վարդապետութիւնն կարի չբնաղ եւ ընտիր եւ  
ծանրակշիւ է, որոյ թէեւ սկզբունքն յիմոտոտարաց աւանդ-  
եալ, սահայն Եկեղեցին զայն ամենեւին իսկ կատարելագործեալ  
առաջի գրաւ, եւ իւր շնորհուն է որ չէ թէ այն կը ճանչցուի  
միայն այլ նաեւ ի բարոյս ի գործ կ'ածուի Եւ այս վարդապե-  
տութեան հինն կը կայանայ՝ զրամոյ արդար ստացման՝ զրամոյ  
արդար գործածութիւնէն տարբեր բան ըլլալուն վրայ: Առանձ-  
նական ինչք ունենալ, ինչպէս ի վեր անգր սեսանք, մարդուն  
բնական իրաւունքն է. եւ այն իրաւունքը գործածելու, մանա-  
ւանդ յընկերակցութեան կենաց, ոչ թէ օրինաւոր, այլ ամենե-  
ւին իսկ հարկաւոր է: «Օրէն է ստանալ մարդոյ զիւրն: Եւ այս  
կարեար եւս է առ. մարդկեղէն կեանս» (5): Այլ եթէ ինչպիսի

- (1) Բ ՏԻՏ. Բ. 12.  
(2) Բ Կորնթ. Դ. 17:  
(3) Մատթ. ԺԹ. 23-24:  
(4) Ղուկ. Զ. 24-25:  
(5) Բ. Բ. Խնթ. ԿԶ. 30ր. Բ:

Թէ ինչպէս պէտք է ըլլայ ընչից գործածութիւնը, Եկեղեցին առանց ինչ տարակուսանայ կը պատասխանէ . «Առ, այս, ջե պարտ մարդոյ ունէլ զարտարին իրս որպէս անձին սեպնական այլ իբրեւ հասարակաց, որով մարքասցի որ հեշտեաւ, բաժանորդս այնոցիկ առնել եւ գայս յորժամ կարօտանայցենն: Ոյր վասն եւ ասէ Առաքեալն. Մեծատանց որ եւ յայսմ աշխարհի՛ պատուներ տաջի՛ր . . . առատս սիրունս հաղորդս լինեյ» (1): Ստոյգ է թէ ոչ ումք կը հրամայուի այլոց բաշխել որ ինչ իրեն կամ իւրայոցն հարկաւոր է ի գործածութիւնս . նամանաւանդ չտալ այլոց զայն եւս որուն կը կարօտի իր անձին պատշաճն ու վայելուչը պահելու համար : «Ձի ջե պարտ ումեք անպատշաճ կէնօք կեայ» (2) Այլ հարկաւորութեան եւ վայելուցութեան պահանջ ըստ բաւականի լեցնելէն վերջը, մնացածէն կարօտելոց առատաձեռնելն պարտք է : «Չարժանն իսկ սուր ողորմութիւն» (3) : Այս պարտքն չի ծնանիր յարգարութիւնէ (ի բաց առեալ յետին թշուառութիւնը), այլ ի Քրիստոնէական սիրոյ, զոր օրինաց ազդեցութեամբ պահանջելն ամենեւին իսկ իրաւունք չէ : Այլ պիտի ի վերոյ քան դօրէնս եւ զպատաստանս մարդկանն օրէնք եւ դատաստանն Քրիստոսի Աստուծոյ, որ առատաձեռնելու սովորութիւնը բաղում մաշամբ կ'ազգարարէ . «Երանելի է մանաւանդ տալ քան առնուք» (4), եւ հետեւաբար սղքատաց եղած կամ ժխտուած լարերարութիւնը իրեն եղած կամ ժխտուած պիտի դատէ : «Որովհետեւ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք» (5) : Այս բաներուս համառօտութիւնն է թէ սլ որ յԱստուածային բարութիւնէն ընդունած է լիազօյն առատութիւն գոյից՝ թէ՛ մարմնաւոր ըլլան եւ արտաքին, թէ՛ հոգեւոր, այն պատճառաւ ընդունած է որ զայն գործածէ իւր կատարելութեան եւ նոյնպէս յօգուտ եւ ի պէտս այլոց՝ իբրեւ պաշտօնեայ աստուածեղէն տեսչութեան : «Որ ունիցի գտադանդն բանի, ամենեւին իսկ խնամ կայցէ մի՛ լուել որ ունիցի գորդութիւն ընչից, պան ունիցի յառատաձեռն ու

(1) Բ. Բ. Խնդ. ԿԵ. յօդ. Բ :

(2) Բ-Բ. Խնդ. ԼԲ. յօդ. Զ .

(3) Ղուկ. ԺԱ. 41. Ըստ վաղախոյն «Եւ զմայեւն աստուածային» :

(4) Գործ. Բ. 35 :

(5) Մատթ. ԻԵ. 40 :

դորմածութենէ մի՛ բմբրի, որ ունիցի գարուեստ առաջնորդե-  
լոյ, կարի իմն գուն գործեսցէ եւ գգործն եւ գշահ նորին բա-  
ժանել ընդ ընկերին» (1):

Իսկ բարտի բարիքներէն անմասն եղողներուն Եկեղեցին  
կ'ուսուցանէ թէ ըստ դատաստանացն իսկ Աստուծոյ ազքա-  
տութիւնը արհամարհելի բան մը չէ, եւ աւուրն պարէնը աշ-  
խատութեամբ իննդուրուն վրայ ոչ ոք պէտք է ամչնայ: Եւ  
զայս Քրիստոս Տէրն իրօք ու արդեամբ հաստատեց, որ վասն  
փրկութեան մարդկան «Աղքատացաւ, որ մեծատունն էր» (2), եւ  
Աստուծոյ որդի եւ նոյն ինքն Աստուած ըլլալով, կամեցաւ սա-  
կայն հիւսան որդի տեսնուիլ ու համարուիլ. նա մանաւանդ իւր  
կենաց մեծագոյն մասը հիւանական զործոց մէջ սպառելը յանձն  
առաւ: «Ո՛չ սա է մանուկ հիւսանն եւ որդի Մարեմայ» (3): Որ  
ոք ուշ եղեալ պիտի նայի ընդ Աստուծային օրինակս, հեշ-  
տեաւ պիտի իմանայ թէ մարդու ճշմարիտ արժանապատուու-  
թիւնն ու զերազանցութիւնը կայացած է ի բարոյս, այս է յա-  
ռաքինութեան. իսկ առաքինութիւնն՝ որ մահացուաց հասարա-  
կական ստացուածն է, մատչելի է փոքունց եւ մեծայ, փար-  
թամաց եւ սինդրորին հաւասարապէս. եւ միայն առաքինու-  
թիւնը եւ արժանիք, յորում եւ իցէ անձի գտնուին, պիտի ըն-  
դունին յաւիտենական երջանկութեան վարձքը: Մանաւանդ թէ  
զժբաղքներուն աւելի հակամէտ կ'երեւի նոյն ինքն Աստուծոյ  
կամքը. որովհետեւ Քրիստոս ազքասաներուն երանի կու տայ(4).  
աշխատանաց ու սոց մէջ եղողները սիրողաբար առ ինքն կը  
հրաւիրէ սիրելիւ համար (5). Խոտաններն եւ անիրաւութեամբ  
լլկեալներն գորովալից խանդաղատանօք կ'ընդգրկէ «Որոց իրաց  
ծանօթութեամբ հարուստներուն վերացեալ մեծամտութիւնն  
զիւրեաւ կը խորտակի, վշտացելոց վհատեալ ոգին կը կանգնի .  
նորա ի զիջողութիւնն եւ սորա ի համեստութիւնն կը ստիպուին:  
Այսպէս ամբարտաւանութեան տենջացած միջոցն կ'անդայտու-  
նայ, եւ զժուարին չըլլար որ երկու գատակարգերն ալ՝ բարե-

(1) Ս. Գր. Մէծ, յԱ.-Էր. Ճառ Թ. Ը-է-7:

(2) Բ Կոր. Բ, 9:

(3) Մարկ. Զ. 3:

(4) Մար. Ե, 3. «Երանի աղքատաց հոգեով»:

(5) Մար. ԺԱ, 28. «Եկայ՝ առ ին սոխնայն, վարդապետի և  
բէռնաւորի եւ ես հանգուցից ղյեզ»:

կամաբար իրարու ձեռն կարկառելով, միաշունչ եւ միասիրտ յօղին ի մի միաբանութիւնս :

Այլ սակայն եթէ Քրիստոնէական պատուէրներուն հնազանդելու ըլլան, քիչ բան է սն տան լոկ բարեկամութիւնն, նոյն իսկ եղբայրական սէրն զանոնք պիտի միաւորէ : Որովհետեւ պիտի զգան եւ պիտի իմանան թէ ամեն մարդիկ զխոզիկն ի հասարակաց հօրէն յԱստուծոյ ծնեալք են : ամենեքին ի մի եւ ի նոյն վախճան բարեաց կը դիմեն, որ Աստուած է ինքնին , որ միայն կարող է կատարելապէս եւ բայարձակաբար երջանկացնել մարդիկներն ու Հրեշտակները : Կարձեալ թէ նոյնպէս իւրաքանչիւրն Յիսուսի Քրիստոսի չնորհին փրկեալ, եւ ի պատիւ որդւոյն Աստուծոյ վերամբարձեալ են, որպէս զի ամենեւին իսկ եղբայրական զօղիւ թէ՛ ընդ իրեարս եւ թէ՛ ընդ Տեան Քրիստոսի, «*որ անբռնիկն է է Տէր եղբայր քաջաց*», ի սէր սերտ միանան : Դարձեալ թէ բնութեան բարիք, Աստուածիզէն չնորհաց պարզեւք՝ հաւասարապէս եւ անխաբ կը պատկանին ընդհանուր մարդկային ազգին, եւ ո՛չ ոք՝ բաց յանարժանէ ումեքէ, յերկնաւորն բարեաց զուրկ անժառանգ չկրնար լինիլ : «*Եւ եթէ որդիք ապա եւ ժառանգք, ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի*» (\*) :

Ահաւասիկ այս է տխար պարտուց եւ իրաւանց, ինչպէս կ'ուսուցանէ քրիստոնէական իմաստասիրութիւնն : Ո՛չ աղաքէն ի սուղ ժամանակի ամենայն կազ եւ կոխ կը հանդարտէր, եւ թէ այն զօրէր տիրէր քաղաքային ընկերութեան մէջ :

Հուսկ ուրեմն, Եկեղեցին չչատանար ապաքինութիւնն զանելու ճամբան միայն ցոյց տալով, այլ իւր իսկ ձեռքը կը մատուցանէ զեզն : Որովհետեւ յայն միայն միտ եղեալ է զի մարդիկները մարգէ, հրսհանդէ եւ յարմարցնէ իւր բարեկարգութեան եւ վարդապետութեանը, եւ մեծապէս գուն կը դործէ որ այս վարդապետութեան ամենափրկարար վտակները, Եպիսկոպոսաց եւ Կղերին գործունէութեամբ, որչափ հնար է, ընդարձակագոյնս ծաւալին : Յետոյ կը նկրտի թափանցել զբաւել հոգիներն ու հակել կամքերն, որպէս զի հանդուրժեն վարիկ եւ առաջնորդուիլ Աստուածային պատուիրանաց կանոններով : Եւ այս կէտն մեծապէս կարեւոր է եւ ծանրակշիռ, այնու զի մեծամեծ օգուտներու ամբողջ պատճառը կը պարունակէ : եւ յայ-

(\*) Հատ. Ը, 17 :

սըմ մասին մի միայն Եկեղեցին կրնայ զերազանցաբար գործել: Զի ուրիշները սթափեցնելու համար ի կիր արկած գործիքներն, առ այս յատկապէս սրուած են իրեն ի Յիսուսէ Քրիստոսէ, եւ յԱստուածուստ չնորհեալ ընդաբոյս ազդեցիկ զօրութիւն ունին: Այս գործիքներն միայն յարմար են սրտի ներքապոյն ծալածոյ խորչերուն մէջ թափանցելու եւ մարդուն համոզակեր ըլլալու որպէս զի հըռ եւ հպատակ գտնուի պարտուցը, բազմատենջ սղոսն յօժարութիւններն ու խլրտումները կանոնաւորէ, զԱստուած եւ զընկերն մասնաւոր եւ զերազոյն սիրով սիրէ, եւ առաքինութեան ընթացքն արգելող ամեն տեսակ խոչն եւ խափան անվիհեր արիութեամբ խզէ խորտակէ: Բաւական պիտի ըլլայ ի մասին հոս օրինակները առ սակաւ մի յուչ ածել: Իւրն եւ եղիւութիւնը զորս կը յիշեմք, հեռի են յո եւ իցէ կասկածանայ, այսինքն թէ մարդկան քաղաքային հասարակօրոյ բնկերութիւնը քրիստոնէական կարգերով ու կանոններով հիմնովին բարենորոգուած է, սոյն նորոգութեան չնորհիւ մարդկային ազգը ի լաւագոյն անդր նկրտած, մանաւանդ թէ ի կորստանէ ի կեանս վերակոչուած է, եւ այնպիսի մեծ կատարելութեամբ աճած զարգացած է, մինչեւ ոչ յանցեալ դարուն տեսնուած է երբէք նմանն, եւ ոչ յապագայ ժամանակս պիտի կարենայ մեծագոյնն զալ ի գոյութիւն: Վերջապէս թէ մին Յիսուս Քրիստոս այլոց բարեաց սիւղըն է եւ վախճան, որպէս ամենայն ինչ ի նմանէ ծագեալ, այսպէս ամենայն ինչ առ նա վերաբերելի է: Զի յորժամ Աւետարանին լոյսն ընդունելով, բանին մարմնաւորութեան եւ մարդկան փրկութեան մեծ խորհուրդն ուսան տիեզերք, կեանք Յիսուսի Քրիստոսի՝ որ Աստուած է եւ մարդ, բնութանալ ծաւալեցաւ ընդ քաղաքս համօրէն, եւ սողորեց բեղմնաւորեց զայն հաւատով եւ պատուիրանօք եւ օրինօք նորին Որով եթէ հարկ ի վերայ կայ զարման տանիլ մարդկային ազգին՝ մի միայն Քրիստոնէական կենաց եւ կարգաց եւ կանոնաց վերանորոգութիւնն պիտի մատուցանէ այն զարմանը: Զի վատթարեալ եւ քայքայելու մերձ եզող ընկերութիւն մը վերտին ի կենդանութիւն կոչելու համար պէտք է զայն այսրէն ի սկզբունս անդր վերածել: Որովհետեւ իւրաքանչիւր ընկերութեան կատարելութիւնն իւր կազմակերպութեան վախճանին աշխատիլ եւ զայն ի ձեռս բերելն է. այնպէս որ միեւնոյն պատճառն ծնանի ընկերային շարժումներն եւ գործողութիւնքը, որ եւ ծնաւ գնոյն ինքն զընկերութիւն: Հետեւաբար շեղիլ յայն

կարգացն՝ ակտանալ է, անդրէն յայն կարգն դառնալ՝ բու-  
ժունն։ Եւ ինչպէս որ զայս կը հաստատեմք հանրութեան վը-  
րայօք, սապէս եւ կ'ըսեմք աշխատութեամբ ապրող քաղաքաց-  
եաց համար, որոյ բաղմութիւնը ամենամեծ է։

Եւ պէտք չէ կարծել սակայն թէ Եկեղեցին բոլորովին հո-  
գիները ինամեղու սրտազած բլլալով, մահկանացու եւ երկրա-  
ւոր կեանքն ամենեւին անտես առնէ։ Մասնաւորապէս սինդրո-  
րին նկատմամբ կ'ուզէ ու կը ճգնի որ նա իւր ամենաթշուառ  
վիճակէն թափեալ դանձն, լաւագոյն վիճակ մը ի ձեռս բերէ։  
Եւ մարդիկը յառաքինութիւն կոչելովն ու կրթելով, առ այս ոչ  
դողն ինչ զօրաւիզն կը լինի։ Քանզի Քրիստոնէական բարք եւ  
կենցաղ՝ յորժամ անարատ են, ինքնին արտաքին իրաց վրայ  
մասն ինչ յաջողութեան կը տխուն, զի հաշտ առնեն զԱստ-  
ուած՝ զսկիզբն եւ զազրկւր ամենայն բարեաց, կը սանձահա-  
րեն կենաց երկու ժանտամաներն, որք կարի իսկ յաճախ զմարդ  
յառաւելութեան իսկ ընչից կը թշուառացնեն, այսինքն է չա-  
փազանց ընչաքաղցութիւն եւ հեշտութեանց ծարաւ (1)։ վեր-  
ջապէս սակաւապէտ կենօք գո՞՞ բլլալով, եկամտին նուազու-  
թիւնը ինայողութեամբ կը լեցնեն։ հեռի ի մղութեանց, որք  
ոչ միայն դուզնաքեաց գոյքն, այլ եւ ամենամեծ հարստութիւն-  
ներն կը փճացնեն, եւ հոյակապ ստացուածներն կը վառնեն։  
Բաց ատի, ալքատ գատուն բարեոյն համար ուղղակի ինամ-  
քով հաստատութիւններ կը կանգնէ ու կը զարգացնէ, որոնք  
անոնց թշուառութիւնները կարող են մեղմացնել։ Մասնաւոր  
այս ակտակ բարեգործութեանց մէջ այնչափ զկր ի վերոյ հան-  
դիսացաւ, զի իւր թշնամիքն անդամ զինքն զովասանօք հըռ-  
չակեցին։ Առ ամենաճին Քրիստոնէայս այնպէս մեծ էր փափո-  
խակի սիրոյ զօրութիւնն, մինչ զի փարթամագոյնք իրենք զի-  
րենք կը զրկէին իրենց ստացուածէն, այլոյ օգնելու համար,  
ոյր վասն «Եւ ոչ որ կարօտի ի նոսա» (2)։ Առաքելաբ մասնա-  
ւորաբար սարկաւազաց կարգն հաստատելով, անոնց յանձնեցին  
հանապազօրեաց բարեգործութեան պաշտօնը. եւ Պաւղոս սու-  
քեայ, թէ եւ ամենայն Եկեղեցեաց հոգերովն զբաղած, այսու ա-  
մենայնիւ. չտարակուսեցաւ բաղմաշխատ ճանապարհորդութեանց  
զիմազբաւ բլլալ, որպէս զի կարօտացեալ Քրիստոնէից անձամբ

(1) «Արժար ամենայն շարեաց արժախերտութիւն է»։ Ա.ՏԻԺ. Զ. 10։

(2) Գործք. Դ. 34.

տանէր իւր հաւաքած ողորմութիւնը : Այս տեսակ գրամներն, զոր ամեն ժողովներու մէջ Քրիստոնեայք յօժարակամ կը հանդանակէին, Տերտուղիանոս Աւանդ Քարեղաշրուհեան կը յորջորջէ, որովհետեւ կը ծախուէին, «ի կերակրել եւ ի քաղել զկարօտեայսն, եւ ի մանկուսն եւ յաղջկուսն զրկեայս յընչից եւ ի ծնողացն, եւ ի ծառայս ծերացեայս, դարձեայ ի նաւաբեկեայք» (\*) Աստի տակաւ տակաւ գոյացաւ այն ստացուածն, զոր Աստուածապաշտ խնամով պահպանեց Նիկեղեցին իրրու ընտանեկան գոյք կարօտերոյ: Նա մանաւանդ խեղճ ժողովուրդը նորանոր օգնութիւններով մուրալու ամօթէն ալ ազատեց: Որովհետեւ հարուստներու եւ աղքատներու հաւասար ծնողն ըլլալով եւ ամենուրեք զարթուցանելով եւ ազնուացնելով զերազոյն սէր, կրօնաւորական միաբանութիւններ հիմնեց, եւ ուրիշ չստ մը օգտակար հաստատութիւններ կանգնեց, որոնց օգնելովը զըրեթէ ամեն տեսակ խեղճութիւն կը սփոփուէր: Կան այն եւս այսօր այնպիսիք, որ ինչպէս ժամանակաւ հեթանոսք, այս չըրնաղ սիրոյ համար կը յաւակնին բամբասել զՆիկեղեցին . ուստի եւ աշխարհային օրինաց վրայ հիմնեալ հաստատութիւններ կանգնել ուղեցին, Քրիստոնէական ղթութեան հանդիսէն հակառակ: Բայց պիտի չզանուի մարդիկէն հանճարիմաց արուեստ եւ ոչ մի, որ կարենայ փոխանակել Քրիստոնէական սէրն ու զթութիւնը, որ ամբողջովին զինքն կը նուիրէ յօգուտ այլոց: Միայնայն Նիկեղեցոյ է այն առաքինութիւն, զի ի սրբազան Սըրտէն Յիսուսի Քրիստոսի եւ եթ կը բղիխ, եւ ս ոք յՆիկեղեցոյ կը հեռանայ, կարի խակ մեկուսի կը թափառի ի Քրիստոսէ:

(Շարայարելի)

Թարգմ.

Գեորգ Վ. Թերզեպուհեան

---

(\*) Գեորգ Զարագոշուհեան Բ, 1Թ:

## Վ Ե Ր Զ Ի Ն Ա Մ Ի Ս Ք

### ՍԱԿԱԻԱՄԵԱՅ ԿԵՆԱՑ

ՈՂԲԱՑԵԱԼ ՊԵՏՐՈՍԻ ԱԴԱՄԵԱՆ



Մայրաքաղաքիս ազգային եւ այլ ազգաց լրագրք ողբաց-  
եալ Ադամեանի մահը դուժեղէն յետոյ, նորա յուզարկաւորու-  
թեան եւ թաղման տխուր հանդիսին շքեղութիւնները նկարագ-  
րեցին, եւ իւր արուեստին մէջ ստացած փառքը ըստ արժան-  
ւոյն գնահատելով, փոքր ի շատէ նորս անունը հռչակեցին:

Ադամեանի կեանքն կարճատեւ եղեւ, իւր փառաց ծայրն  
հասած, մինչ ամեն ազգային սիրու փառօք եւ սքանձանօք  
կը բարախէր, սնա գերեզմանն բացաւ, եւ իւր սրբը կըլլելէ  
յետոյ գոցուեցաւ: Ադամեանի կեանքը կրնանք նմանեցնել զար-  
նանային այն գեղեցիկ արեգական, որ յառաւօտու կ'երնէ հորի-  
զոնէն, տիեզերով ամեն կողմ իւր ազդու ճառագայթները, երկին-  
քըն պայծառ է, եւ մարդիկ ապահով եւ ուրախ են թէ, գեղե-  
ցիկ օր մը պիտի լինի: Յանկարծ հորիզոնէն փոքր, նուրբ եւ  
սպիտակ ամպ մի կը սկսի վեր կ'ընել, եւ որչափ կը բարձրանայ,  
այնչափ կը սկսի մեծնալ, թանձրանալ եւ թխանալ, մինչեւ կու-  
զայ կը ծածկէ արեգակը, որ ի գէնիթ հասած էր, եւ բոլոր եր-  
կինքը եւս կը պատէ: Այլ ամպ կը փարատի, երկինք կը պայ-  
ծառանայ, այլ արեգակն գնացեր է, գիշեր է, խաւար կը տիրէ:  
Ադամեանի կեանքն այսպէս եղեւ, փառաց ծայրն հասած էր,  
այլ տակաւին իւր ճանապարհին կէտն էր, անողոք ախան զինք  
սարաժամ ի գերեզման իջեցուց: Մեր նպատակն Ադամեանի  
կենսագրութիւնը յօրինել, կամ իւր արուեստին մէջ ստացած  
աննման յաջողակութիւնը եւ փառքը յօրինել չէ, այլ հաւատա-  
րիմ մեր հանդիսին նշանաբանին, որ է Կրօնք եւ Գիտաւթիւն,  
կ'ուղեմք կարճ ի կարճոյ պատմել նորա որպէս միշտ, այսպէս  
եւ իւր կենաց վերջին ամսոյ մէջ որոտայցոտած Գրիստոնէական  
եւ ճշմարիտ իմաստասիրի վայել զգացումները, որք թէպէտ  
յայլուստ փոքր ի շատէ ծանօթ են:

Պետրոս Ադամեան, թեպէտեւ ի ծաղիկ հասակի եւ ի ծայ  
փառաց, անուրբմ ախտին ճիւղնայ մէջ ընկած, կը տանջուէր

և ևր հիւճէր. սակայն միշտ Աստուծոյ կամաց համակամ լինելով, անզապար կ'աղօթէր առ Աստուած. և համբերութեամբ ևր սանէր հիւանդութեան զաւերը : Ճշմարիտ իմաստունն չկարէ անաստուած և ևր սկեարտիկեան լինել, իմաստակը միայն այդ առանձնաշնորհութիւնը սնին : Ուստի Աղամեան իւր մտերմաց հետ և ևր առանձնական խօսակցութեանց մէջ ոչ միայն գիտութեանց, այլ և ստէպ Աստուծոյ և նորա հրաշալկաց վրայ ըսքանչացեալ երկար ժամեր ևր ճառէր : Ոչ միայն ամենաքաջ գերասան էր, այլ և Աստուածաբաշտ բանաստեղծ, զի իւր գրուածոց մէջ իմաստութիւնն և ևր հրօնքն, որք իւր սրտին զգացմանց սրտացայտութիւնքն էին, սքանչելապէս ևր վայրին : Անհնար է ստանց խորին յուզման և հիացման կարգալ նորա սո «Ֆաւրիա-գի» ուղղած մի բանաստեղծութիւնը, զոր իւր մահուանէ հազիւ մի քանի ամիս յտաջ գրած է, և յորում, իբրև ճշմարիտ Գրիտոսնայ, ի մօտոյ կ'ողջունէ զմահ, և որ Արեւելյ լըրապրի մէջ հրատարակեալ է : Այդ անմահական տողերը կարգացողն, որ ստուգիւ Աղամեանի կտակն կրնայ համարուիլ, զիւրաւ ևր նշմարէ ճշմարիտ իմաստնոյն հետ ճշմարիտ քրիստոնէական (\*) : Նոյն իմաստասիրական և Աստուածաշարութեան հազիւ ևր տեսնուի նորա այլ գրուածոց մէջ և ևր, որպէս են «Ռերասանն» և «Վարիլ մի ջուր» (Հանդէս Աճօրեայ Ա. և Բ. Տարի) : Տեսնելով Աղամեան զի անգութ ախտն հակայաքայլ ևր յառաջէր, կոչել սուաւ իւր վարեմի և մտերիմ բարեկամ զՅարգ. Տէր Յ. Վ. Ա. և ինչոքոյ որպէս զի իւր կենաց ընդհանուր խոստովանութիւնը լսէ, իբրև ի կէս մահու. Յարգ. Վարդապետն յօժարութեամբ յանձն առաւ, և Աղամեան, յետ խոստովանութեան, անկեալ սուաջի Սրբոյ Խաչի՝ այնպիսի զղջում մի ըրած է, մինչև յարտասուս շարժել զնոյն ինքն զխոստովանահայր վարդապետն, և նոյնպիսի ջերմ հասնութեամբ և բարեպաշտութեամբ ընկալած է զԱմենասուրբ Հաղորդութիւնը :

Բարեկիշտասակ Աղամեան գոնութեամբ և ուրախութեամբ պատմած է քանի քանի հաւատարիմ անձանց թէ, ինքն խոստովանած և հաղորդած էր, և թէ իր սիրտն երկնային միութարութեամբ լի էր : Ինքն մինչև ցվերջին շունչ կենաց, այսպիսի բարի և քրիստոնէական զրացմամբ շարունակեց և Ս.

(\*) Պատշաճ դատեցին + Աղամեանի նոյն գեղեցիկ թերթումը Հանդէս Ներկայ Բողոքն մէջ հրատարակել :

Կրօնիս խորհուրդները եւ միլիթարուժիւնները կամաւ եւ յօ-  
ժարութեամբ ինքնին խնդրելով եւ ընդունելով, աւանդեց իւր  
հողին Արարչին ձեռքն:

Ստուգիւ մեծ եւ անհնարին զաւ եւ անդարման կորուստ  
մի է Ադամեանի պէս բազմահանձար մարդոց մի մահն, այլ իւր  
քրիստոնէական կեանքն, բարի զգացումներն, եւ նախանձելի  
համակամութիւնն եւ մտնն այդ ցաւը ոչ սակաւ կը մեղմացնեն:  
Երանի՜ թէ ամենքն ալ Ադամեանի զգացումները ունենային, եւ  
նորա օրինակին հետեւէին: Բարեյիշատակն Ադամեան բարձր-  
ատուիճան Եկեղեցականի մը հետ խօսելով, սապէս զրուցած է.  
«Սա միշտ հաւատացեալ եղած եւ մնացած եմ, երբէք Ստու-  
ծոյ, Ստուածային իրաց եւ Սուրբ Կրօնիս վերայ տարակոյտ  
ունեցած եւ կամ սկեպտիկեան եղած չեմ»: Եւ զարձեալ շա-  
րունակելով խօսքը բաժն է, «Ինչպէս մարդս իւր աղտոտ լաթերն  
հանելով եւ մաքուրներն հագնելով, սփտիանք եւ հաճութիւն  
կը զրայ, ես ալ սպաշխարութեան խորհրդոյ միջոցաւ հոգ-  
ւոյս աղտերէն մաքրուելով սփտիկեաց եւ երկնային հեշտութիւն  
մը զրայի. ալ յաւէտ երկնից կը պատկանիմ, քան թէ եր՛բը»:

Երանի՜ իւր հոգւոյն: Փառօք տպուեցաւ Ադամեան, այլ կը-  
կրաւոր փառաց արժէքը ինքն իսկ իւր քերթուածոց մէջ զու-  
ցուցած է թէ որչափ ընդունայն եւ անհաստատ բան է: Սուրբ  
եւ Կաթողիկէ Կրօնիս լուսովը, յորում ինքն ծնեալ եւ զատի-  
արակեալ էր, քաջ ծանեաւ թէ մի միայն երկնային պատկը ան-  
թառամ են, մի միայն երկնային փառքն հատատուն եւ անանց  
է. ուստի այնպիսի մահուամբ կնքեց իր մահկանացու կեանքը,  
որպէս զի այն անթառամ պատկաց եւ անանց երջանկութեան  
կարող ըլլայ հասանիլ: Ադամեան, թէպէտեւ անհամեմատ զե-  
րառան, քաջ բանատեսի՛ծ, յաջող նկարիչ, եւ նրբին իմաստա-  
սէր լինելով, եւ իւր բազմատեսակ հմտութեամբք փառաց ծայ-  
րնն հասած էր, սակայն որպէս, եթէ անկրօն ըլլար, այդ փառ-  
քնն պիտի նսեմանար. այսպէս կրօնասէր եւ Աստուածապաշտ  
լինելով՝ իւր ձիրքերն առաւել մեծ ազնուութիւն ստացան, եւ  
իւր փառք առաւել եւս փայլեցան: Միով բանիւ, «Կօրեալ յէ-  
րոջ հոցս ազազեղեալ» պատգամն՝ Ադամեանի համար չէ. զի նո-  
րա յիշատակն քապցր է, նորա անունն զինք ձգնարիտ եւ ան-  
կեղծ սիրով սիրող սրտերու մէջ անջնջկի տառերով քանդակ-  
ուած է: Ուրեմն յիշատակ նորա օրհնութեամբ կոխի միշտ:  
Ստոյգ է թէ Ադամեանի կեանքն ազգին համար մեծ փառք մի

էր, իսկ նորա վախճանն՝ իրեն համար անմահութեան եւ ճրջմարիտ փառաց սկիզբ, եւ իւր նմանեաց եւս օրինակ բարի եւ զեւ Հայ երիտասարդք, երբ Աղամեանի ձիւքերը կը յիշէք եւ կը գրուատէք, մի՛ մոռանայք նաև նորա կրօնասիրութիւնը եւ Աստուածաբաշտութիւնը, նորա ուղիղ եւ ողջամիտ սկզբունքները, որք են սկզբունք Սրբոյ Կրօնիս: Սաէպ կարգացէ՛ք մանաւանդ նորա առ «Ֆանքագիօ» ուղղած զեղեցիկ քերթուածը, զոր գրեթէ մահուան անկողնոյ մէջ գրած է: Եւ ջանացէ՛ք հետեւիլ նորա սկզբանց եւ նմանիլ նորա օրինակին: Այսու միայն կրնաք ապացուցանել թէ, ճշմարտիւ կը սիրէք զԱղամեան, այսու միայն կարէք գնահատել ըստ արժանոսն նորա արժանիքը եւ ձիրքերը, «լի ամենայն սուրբ բարիք, եւ ամենայն սրբաբարեացք ի վերուստ են իջեալ Աստուծոյ»: Հնորած ձիրքերը եւ սրբաբարեացքը գնահատելու կարող ըլլալու համար, հարկ է նախ գիտնալ թէ Աստուած է որ զանոնք կը հնորէ, ինչպէս գիտցաւ Աղամեան:

Ս Ռ Յ Ա Ն Ք Ա Ղ Ի Օ

Դեռ, նորափրիք մատուց է քո կենաց ծառ,  
Որ ծրջի պէրձ արեգական տակ պայծառ.  
Ծիլն ու ծաղկունք պճնեն ճիւղերն լերկ ու գօս,  
Դեռ, դառնութիւն չ'պեղած ճակտիդ գիւր պօս՝  
Կենաց վշտերն չ'գժած այտիդ բռում կընճիտ,  
Ինչո՞ւ, այնքան դառ յուսահատ տաս վըճիտ.  
Դատերով կեանքն անգութ երկնից պատուհաս,  
Ստայգ է որ ամեն պտուղ դեռ տըհաս,  
Ի սկզբան միշտ դառնահամ է եւ կըծու,  
Իսկ ջերմ արփին ծառոց ծաղկանց տարփածու,  
Նոցա ծոցում բաբի համեղ սիւք մ'անույշ՝  
Յօդն եւ անձրեւ տան արմատին կորով ոյծ:

Նոյնպէս երբեմն լինին կեանքեր, ոյց սկիզբ  
Պաշարած է, աղետից հոծ մի պարիսպ,  
Այլ նախախնամ ձեռք մի յանկարծ կու բանդի:  
Զայդ ի հիմանց, փրկէ գնոգին ի բանտէ.

Որ ուռնանայ յուսով սիրով լիռւի՛  
Այն ձեռաց տակ, որ ջ'է մեզ բնաւ քննելի.  
Այլ բնագոյմամբ իսկ ստեպ նորա շառաւիղ՝  
Տեսնենք որոշ խառար կենաց ի շաւիղ.

Ոյր յանդիման մեր հոգին յարջ ծնրադիր,  
Կը բռնուայ էրախտանուագ գինջ բանդիռ.  
Որոյ անուն մեր շրքներից սլանայ  
Յ'երկրէ յ'երկինս, յ'օրհնութիւն է. յ'ովսաննայ:

Այն ձեռք կրկին սփռէ համայն ի տիեզեր  
Ինչպէս առաջն յ'ովկիանու ծովեզեր,  
Նոյնպէս գաստեղս երկնից ի ծոց անբափանց՝  
Իբրէս կաթիլք, արարչագործ իւր քրտանց.

Նա՛ է որ տայ կեանք, մահ, արցունք, ժպիտ, կարօտ,  
Շանթն ի մրրիկ, ճիւնն ի յերինս, ցօղն յ'արօտ,  
Վագրին ճիրան, առիւծին բաշ է. էրախ,  
Արծուին մագիլ, այլ սոխակին երգ ուրախ.

Գայն ընդ ոջխար ապրին կենաց ի կրկես,  
Մին գիշատիջ՝ միւսն էլ խոնարհ ողջակեզ.  
Եւ գլխիկոր բըւին լինիլ յանձնատու.  
Այդ վիճակաց, շատ հակառակ իրարու.

Մարդկանց նըման ջուրնին գանգատ ու բողոք  
Այդ իմաստուն արարչին դէմ անողոք,  
Որ նախախնամ իմաստութեամբն անյատակ՝  
Յամենայնի դրած է պատճառ, նըպատակ.  
Ամենայն ինչ համեմատ է, ներդաշնակ,  
Զարին յորդոր, բարւոյն էլ տայ մրցանակ:

Հաւատա՛ ինն դու ինն քերթոյ պատանի՛  
Քեզ այս հաւատք անհրաժեշտ է պիտանի,  
Թո՛ղ յոռետես հեղինակացոյ բարբառնջանք  
Որք վատակի յոկ փայլելու ունին ջանք.  
Յամաք Զօյան, նստած շքեղ ի Քապիմե,  
Միլիօն Ֆրանքով, մարդկութեան ողբն յօրինե.  
Թեպէտ ճանչնայ կենաց աղետքն ու պատրանք՝  
Այլ սփոփելու արդեօք կուտա՞յ գեթ մի Ֆրանք.  
Շօքենհատեր նոյնպէս հանգիստ, հարուստ, կուշտ,  
Նիւթապաշտի թխած փորին լայն փամփուշտ,  
Աղքատութեան ցաւերն քննե՛ մի առ մի՛  
Ողբալով գայն իբր անաստուած երեմի,  
Ողորմութիւն քե խնդրեին մի *շէշէշէ*,  
Բարկանալով գուցէ դունեն դուրս պրծեր.  
Թերեւս դոքա իրենց կեանքից էլ գոն ջեն՝  
Հրճուանք փնտուեն յոկ նիւթեն եւ ոջնջեն.

Ո՞ն առածն այս շա՛տ արդար է ճշմարիտ,  
Թե ջը գիտե՛նք գնահատել մեր մարգարիտ.  
Հարուստն աւե՛յ կը դժգոհի ի գանգատ,  
Միշտ աւելին ունենալով ի նրկատ.  
Ա. յ նիւթապէս բարեբաստիկն հեշտասեր,  
Երբե՛ք անճնիւր երջանկաց կարգ ջի դասեր.  
Զրկեալն է որ տրնանկութեան մեջ խոնարհ՝  
Ապրի առողջ, տանի վշտերն անհրնար՝  
Զի մարմնական վայելքներում ջե՛ փտտած  
Նորա հոգին. ուրա՛խ ուտե՛ գ՛իւր ջոք հաց.  
Եւ կարծես քե սրտին ի խոր նա կ՛գգայ  
Մի նոր կենաց երջանկութիւն յետագայ:

Ես որ գրեմ քեզ այս տողեր, սի՛րեկիս  
Տարութերեայ իմ դառն ցաւոց մութ յայիս,

Թերեա շա՛տ քիչ կարողացայ գնահատել  
Շնորհքն Աստուծոյ, բարւոյն ի սեր նիրն ասել:  
Իւր պարգեաց դեմ լինելով ապերախտ՝  
Ժառանգեցի գուցէ ցաւերս վերքն եւ ախտ.  
Զի սոռայ վերքերն՝ մեր ձեռօք է որ մեզ տանք  
Եւ տեսնելով մարմնոյն կրից բիւր վտանգ.  
Ազատ կամօք կը դիմենք յայն ի կարուստ,  
Բայց վրկարար ձեռքն այն օրննեայ յանկարծուստ  
Մեզ օգնութեան հասնի կրկին, եւ սաստե.  
Ա՛յդ իսկ նորա անբաւ սիրոյն մեծ վաստ է:

**Անշուշտ երբեմն տկար մահացու իբրեւ մարդ,**  
Կը վըհատինք քե գան ցաւերն բարդ ի բարդ,  
Մանաւանդ որ գործելով շատ ճիգ ու ջանք  
Զի մեղմանար տաղստուկ վերքիդ ցաւ, տանջանք,  
Երբոր բժիշկն յանկարծ ասէ, «ո՛վ անբաղդ  
Զգոյշ կեցի՛ր, կոկորդիդ ցաւն է գնտախտ».  
Ու տուն դառնամ գրախս կախած մեյամաղձ՝  
Ո՛չ բուն ունիմ, ո՛չ իսկ ծարաւ, եւ ո՛չ քաղց,  
Սենեկիս մեջ ցաւօք դեղօք պարունակ,  
Խորհուրդք մահու պաշարեն գիս շարունակ.  
Երեսակայտ քանի՛ցս անգամ ինձ բըւեր  
Թէ սառն պատանք պաղած մարմնոյս փաթարուեր.  
Մահն էլ քամեր գամերն կաղնեայ դագաղին,  
Ժանգոտ ու կոր պողպատովն իւր մանգաղին.  
Սեւ պատկերներ յաջորդէին մէն միւսին,  
Ահա գային յուղարկաւորքն հանդիսին.  
Սեւ ուրուականք, սեւ զգեստներով, սեւ մօրուք,  
Սեւ մաշտոցներ ձեռքերնուն մեջ հաստ գիրուկ,  
Սեւ շարվարով ու սեւ ցուպով մի ժամկոչ,  
Սեւ շապիկով տիրացուներ խառնագոջ.  
Որ լքիտտեն ննջեցէյոց շարական,

Ի կենդանեաց ով որ լսէ այդ կական՝  
Հանգուցելոյն բիւր երանի տայ գուցե՝  
Ոյր ականջներն յաւետ ընդ միշտ էլ գոց է:  
Սորա են որ մահն ահուեյի մեզ տան ցոյց,  
Մինչ բուն կենաց շահն մեզ վառէ հոգելոյց:  
Առարկայից մեզ խնկահոտ գորշ ու մոայլ,  
Միայն մի բան աջքի գարնէ լուսափայլ,  
Թաւիշէ մեծ ծածկոյթին վրայ կարկըտած  
Լուսափողփող է հանդարտիկ տարածուած,  
Մետաքսեղէն ձերմակ նիւթից լայն մի խաջ՝  
Որ մեղմ ծալքով մարմինս ծածկէ սիրահաճ:

**Ես** ընդ նմին դաշտն հետեւիմ մեռելոց,  
Ուր համառօտ մըմուսն աղօթք ու հոգուց.  
Պահպանիջն էլ սովորական անհրաժեշտ,  
Փափայ տերտերն բերնէ քափուկ, է անշէշտ,  
Անշուշտ մէկն էլ պիտի գտնուի անպատճառ՝  
Փղձկեայ ձայնով խօսելու վրաս փոքրիկ ձառ,  
Յետ այնորիկ յուղարկաւորք քաղութիս  
Ցրուին անշուշտ՝ տայով հոգույս ողորմիս:  
Ինձ հետ քաղութն այն տեղ, հոգույս բանկազին  
Չառականերն էլ, Համէք, Ռիբիլ, Լիբ է Բին,  
Դո՛ւ Ալփատյան, որ սիրեցի՛ր զՕթեյլօ,  
Մի՛ բողուք գեք զայն գերեզման խորելոյ:

**Ես** երբ այսպէս սեւեռ աջօր մըտախոն  
Նստիմ տըխուր, հոգիս դատա՛րկ է հժգոն,  
Մանաւանդ երբ կը մըտածեմ ի սարսափ  
Անստգութեան մեջ մոլորեայ ի խարխափ,  
Թէ ձայնս արդեօք կ'ստանա՞յ իւր վայլ նախկին.  
Արդարն Աստուած պիտի ներէ՞ իմ մեղքին.  
Թէ ց'ման րուքեան դատասպարտուած, բեմից զարկ,  
Ի խաւարի պիտ' շիջանին իմ առուրք . . .

Եւ կենդանայն մեռնիլ է դա, բիւր առա՛ղ .  
Ո՛րն սպառնայից գաղափարն այս, մռա՛յլ ճիւա՛ղ .  
Իւր ճիրանաց մեջ տըրորէ գիմ ուղեղ,  
Պատեյով գայն դըժոխային զինչ բաղեղ:

Իսկ այս բոլոր արհաւիրաց մեջ սրտայոյզ  
Չի մնացի՛ ես անմըխիբար եւ անյոյս .  
Հաստատայով, յուսայով միշտ առ Սստուած,  
Չի մեր հոգեաց պայասամն է իւր հարուած:

**Ա**նճնասպանի ոճիրն անեղ հրեշաւոր,  
Անվայել է խոհուն անձին բանաւոր,  
Սակայն մարդիկ շատ հեղ լինին անզգամբ,  
Երբ սբբագրել ճգտին Տիրոջ գործն ու կամբ:

Եւ մեր դարուն քաղցկե՛ղն է այս հոգեկան,  
Միշտ յոփացեալ հեշտութեանց մեջ նիւթական,  
Պաշտել քննել, սիրել եւ զգալ միայն զնիւթ,  
Եւ դարանում լոկ որոնել կենաց հիւթ:

Եւ երբ ցամբի նորա աղբիւրն ի պատիր՝  
Մին քէ չ՛հասնի անուան փառաց շքաբիր,  
Կամ խաղամոյն քէ բաղղն իրմէ տայ փախուստ,  
Վաճառականն քէ ունենայ մեծ կարուստ:

Ուրիշին էլ մարմինն արդէն տկար գնում՝  
Ի յպիրշ հաճոյս փտտի ոսկերց մինչ ի ծած,  
Թշուառ հոգին կեանքից զգայ բոյն զգուանք,  
Չի չափագրանց վայրէջ նիւթին մեղկ զգուանք:

**Կ**ան սիրահարք, որոց համար սիրոյ նետ,  
Մոռացել է երջանկութիւնն բերել նետ,  
Որք բռնուն ի սեր միմեանցից են գուրկ յաւերժ,  
Եւ այս բոլորն յուսահա՛տ եւ կենսամերժ:

Մինն անճնասպան քօթափէ իւր կենաց բէռն,  
Մարդասպանի ոմանք գործէն ժանտ գեղեռն,

Շատն էլ գԱտուած յանդգնաբար ուրանան՝  
Զայն անարդար կոչելու ջախ կուրանան,  
Այլ գիտնականք չեն տեսներ յոյսն իմաստուն  
Մոլորութեան մեջ մնան յամառ հաստատուն,  
Ահա՛ դարուս յառաջադէմ իմաստակ  
Ճիգն ու ջանքեր, արդիւնքն ուսում ու վաստակ.  
Որոյ գաւակն էս դու նոյնպէս, բանաստեղծ,  
Նըկատելով կեանքն անպիտան ու տըխեղծ.  
Այն դարուն որ հոգոց պատնեշ վոս փորէ,  
Յուսանաւորն՝ զանճն տպաննէլ յարդրէ:

Ես որ պաշտեմ քո այդ տաղանդն անխտիր,  
Անկարող եմ բացաարելու սա խնդիր  
Թ' ինչո՞ւ բողած Պղատունն տեսմ կամ Սոկրատ,  
Մե՛ծ քերթողներն էս գնանճարս հոգէխրատ,  
Կը հետեւիս տաղանդաւոր հիւանդաց՝  
Ինքնահասան պատգամախօս մեծամտաց.  
Թեպէտ ասի քե գաւակն էս այս դարուս,  
Սակայն կեանքում անփորճ, անմեղ, դեռ անուս.  
Ես նախ ատաջ գաւակն էս այն արարչին,  
Որից միայն գգուանք տեսար առաջին.  
Երբ յաւասոր մատամբ ճակտիլ ինք դրաս  
Առհասատոչեայ իւր մեծ սիրոյն իբրէս գրաս .  
Բանաստեղծի կընկրն ու դրոշմ, հոգոյ խանդ,  
Որ մեղմանան կեանքիդ ցտեքն, վիշտն ու բանդ,  
Որոյ դեռ նոր ծագում է ջիւջ արշալոյս,  
Հէտ բերելով մեծ ապագայ, խաստում, յոյս:

Ինչո՞ւ հոգոյդ ծաղիկն ուզես դու փակել  
Ի գերեզման. էս այդ տեղ գայդ մըշակել  
Նէխեայ մարմնոց շամանդադովն փոսփորի՝  
Իբր անպիտան մի կտոր փտտած ոսկորի.


Նայ որ այգուն մարգարտացնէ ծարաւի  
Հովտաց քանուն, ճառագայրիցն արեւի-  
Յանաատեղծիդ ինչո՞ւ. սուրբ հրով երկնառաք՝  
Լուսաւորել գարնաւիրս եւ գաւերակ  
Ինչո՞ւ կախել բընարդ ի մի չոր կմախք,  
Որ օրհասին ի շունչ միայն նուագէ տաղը.  
Օ՛ն իմ եզբայր, օ՛ն սիրելի՛դ իմ քերթող  
Մըռայլ տխուր մտքերդ փութով ի բաց բող:  
Սիրով բնութեան յեցո՛ւր սրտին բոյ զանօր,  
Եւ գկստուծոյն, որ լոկ բարեօքն է ծանօր,  
Ապաշաւի վայր մ'է երկիրս, հատուցմանց,  
Մէկին տայ ժպիտ, միսին հաճոյք, ցաւ ոմանց:

Տղմոտ կեղտոտ է կեանքն իրօք նիւթական՝  
Ուր կորչի մարդ անշուշտ վաղ կամ անագան,  
Եթէ երբէք հառաջանօք ինչպէս Եռնի՛  
Չի բարձրացնէ աչքերն յերկինս, բաղցրախաւնկ  
Ծաղկին նըման որ, բէպետ աղբի մէջ քաղուած՝  
Կենաց արփայն բանայ գիւր ծոց ցողմամ.  
Կամ որդան պէս որ սողայով միշտ յերկրի,  
Չոր տերեւօք աշխատութեան մէջ բերկրի.  
Լուռ անտրտունջ կը հիստէ իւր խիտ շերամ,  
Յանկարժ օր մ'այ բէւեր առած, խոռոներամ  
Սլանայ յերկինս, ուր չկան պատնէշք ցաւ ու խրամ:

28 Յունուար 1891

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

Պէշե-տէրէ



## ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ



Շարայարուքիւն (\*)

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Չգտումն բազկաց

Այս շարժումը հախորդին հակադարձն է:  
Կրկնէ 8, 12, 16 անգամ:

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Թիւրումն ձնգաց

1. Բազուկներդ խաչաձեւ զիր թիկանցդ վրայ. մարմինդ  
ուղիղ բռնելով՝ ծունկերդ տակաւ առ տակաւ ծռէ: 2. Վեր  
կանգնէ՝ առանց բազուկներուդ զիրքը փոխելու:  
Կրկնէ 6, 8, 10 անգամ:

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**


Թիւրումն ձնգաց

1. Բազուկներդ կախ թո՛ղ, ծունկերդ ծռէ՝ յառաջ կոյս՝ ոտ-  
քերուդ ծայրին վրայ կոխելով եւ բազուկներդ հորիզոնադար  
յառաջ բռնելով: 2. առաջին զիրքին վերադարձիր:  
Կրկնէ 6, 8, 10 անգամ:

Շարայարեյի

ՅՈՎՀ. Վ. ԱԷԿՄԵԱՆ

(\*) Տէն Պարկէր Բ. Տարէ, էջ 120



ՊՍՏԿԵՐ տասն է հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է

Կ. Պօլսոյ համար . . . . . 40 դահեկան

Գաւառաց է օտար երկիրներու համար  
քղբատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

## Իւրաքանչիւր թիւ 2 դահեկան

ՊՍՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Նեշիլ փողոց  
Թիւ 1, ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան է. քերթին  
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N<sup>o</sup> 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولنمشدر